

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեում փորձագետ ներգրավելու մասին**

**Հայաստանի Հանրապետության Վիճակագրական Կոմիտեի Գեղարքունիքի մարզային վարչության տարածքային վիճակագրության բաժնի փորձագետ**

**Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ պետական խորհուրդ) կողմից սահմանված վիճակագրական փաստաթղթերի միջոցով ռեսպոնդենտներից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի (**Վարդենիսի տարածաշրջանի**) վիճակագրական տվյալների հավաքման աշխատանքների մշտադիտարկում.

2. Մարզի (Վարդենիսի տարածաշրջանի) հավաքված վիճակագրական տվյալների ամփոփման և մուտքագրման աշխատանքներին մասնակցություն.

3. Ռեսպոնդենտների վերաբերյալ վիճակագրական ներքին ռեգիստրների վարման աշխատանքներին մասնակցություն.

4. Պետական ռեգիստրում նոր գրանցված, ինչպես նաև ընտրանքում ընդգրկված կազմակերպություններին պետական խորհրդի կողմից սահմանված կարգով վիճակագրական փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ իրազեկման աշխատանքներին մասնակցություն.

5 Ռեսպոնդենտներին վիճակագրական փաստաթղթերի ձևերով ապահովելու աշխատանքներին մասնակցություն:

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ մինչև մեկ տարի ժամկետով:**

**Փորձագետի պարտականությունները՝**

1.Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.

2.Պահպանել Վիճակագրական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները,աշխատանքային կարգապահությունը.

3.Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.

4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

### **Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

- Բարձրագույն կրթություն,
  - Իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
  - Հաշվետվությունների կազմման, իրավական ակտերի, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ,
  - Անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
  - Համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն:
- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 10.12.2020թ.**

### **Աշխատանքի վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս, Ռոմանի 7:**

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

### **Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:**

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում Վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

2. Հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. թիվ 878-Ն որոշմամբ հաստատված Կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարությունը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

3. Տվյալ աշխատանքի անցնելու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող

պահանջների բավարարումը հավասող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից(ներից) պատճենները, բնօրինակների հետ միասին.

4.արական սեռի անձիք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայականի պատճենները բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք.

5.մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

6.անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

7.համառոտ CV:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հեռախոսահամար՝ 011/52-44-97, էլ.փոստ [staffdivision@armstat.am](mailto:staffdivision@armstat.am)